Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2025 թվականի սեպտեմբերի 9-25-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաք Շանհայ այցի շրջանակներում իրականացված գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**

Հայկազ Քոչարյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ ՀՀ ՊԵԿ) հետբացթողումային հսկողության և ստուգումների վարչության մաքսային գործարքների հսկողության և ռիսկերի վերլուծության բաժնի պետ

Սամվել Ղազարյան - ՀՀ ՊԵԿ արտաքին տնտեսական գործունեության մաքսային սպասարկման և հսկողության վարչության պարզեցված մաքսային գործառնությունների սպասարկման բաժնի պետ

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաք Շանհայ, Շանհայի մաքսային ծառայության համալսարան 2025թ. սեպտեմբերի 9-25-ը

3. **Հրավիրող կողմը.**

Չինաստանի Ժողովրդական Հանրապետության (ՉԺՀ) մաքսային ծառայություն (Շանհայի մաքսային ծառայության համալսարանի նախաձեռնությամբ)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

Գործուղումը կազմակերպվել էր Չինաստանի Ժողովրդական Հանրապետության քաղաք Շանհայում կայանալիք «Մաքսային լիազորված տնտեսական օպերատորների համակարգ՝ «Գոտի և ճանապարհ» նախաձեռնության երկրների համար» ծրագրի շրջանակներում: Այցի նպատակն էր ծանոթանալ ՉԺՀ մաքսային մարմնի կողմից լիազորված տնտեսական օպերատորների (LSO) մասով և առհասարակ հետբացթողումային հսկողության և ստուգումների շրջանակներում իրականացվող ընթացակարգերին և ծրագրերին, ռիսկերի կառավարման համակարգերին և ծրագրերին, արհեստական բանականության կիրառմանը, ինչպես նաև իրականացնել փորձի և գիտելիքների փոխանակում հրավիրված երկրների մաքսային մարմինների ծառայողների միջև: Միաժամանակ, այցը նպատակ ուներ մաքսային ծառայողների հետ հանդիպումների ընթացքում ստացված գիտելիքները և ներկայացված միջազգային փորձը տեսնել պրակտիկ կիրառման մեջ, ծանոթանալ դրանց առանձնահատկություններին, ստանալ

պրակտիկ կիրառման ընթացքում ծագող հարցերի վերաբերյալ պատասխաններ: Այցի նպատակն էր բարելավել ՀՀ մաքսային մարմնի կողմից իրականացվող մաքսային հսկողության որակը՝ այն համապատասխանեցնելով Համաշխարհային մաքսային կազմակերպության կողմից սահմանված միջազգային ստանդարտներին:

5. Քննարկված թեմաները

Այցի ընթացքում ներկայացվել են.

1. ՉԺՀ-ի մաքսային մարմինների ռազմավարության, կառուցվածքի, ստորաբաժանումների գործառույթների և լիազորությունների առանձնահատկությունների, պարտականությունների ու իրավունքների ընդհանուր տեղեկատվություն,
2. ԼՏՕ-ի ինստիտուտը ՉԺՀ-ում, ԼՏՕ-ի կարգավիճակի տրամադրման համար պահանջվող չափանիշները, համապատասխանության ստուգման աշխատանքները, նրանց գործունեության հետագա մոնիտորինգը, ԼՏՕ-ների միջազգային փոխճանաչումը և պահանջվող չափանիշները,
3. ՉԺՀ-ում մաքսային ձևակերպումների հեշտացման բարեփոխումներն ու միջոցառումները, արհեստական բանականության կիրառումը ժամանակակից մաքսային ընթացակարգերում, ինչպես նաև «խելացի» մաքսային ծառայության կառուցվածքի մեխանիզմներն ու գործնական փորձը մաքսային ոլորտում,
4. Հետբացթողումային հսկողության (աուդիտի) դերը ՉԺՀ մաքսային համակարգում: Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձանց շրջանակներում օրինապահության ներդրման և խրախուսման ռազմավարական մոտեցումները: Նախաբացթողումային և հետբացթողումային հսկողությունները ՉԺՀ-ում: Օրինապահությունից բխող ռիսկերը, դիմակայումը հնարավոր մարտահրավերներին:
5. Մաքսային հսկողության շրջանակներում ռիսկերի կառավարման համակարգի բաղադրիչները՝ տեղեկատվության հավաքագրումը և աղբյուրները, ռիսկերի ոլորտները և ցուցիչները.
6. Պրակտիկ դեպքերի (ծագում, դասակարգում, մաքսային արժեք) քննարկում և վերլուծություն
7. Մաքսային հանցագործությունների դեմ մղվող պայքարի առանձնահատկությունները և այդ ուղղությամբ իրականացվող կանխարգելիչ միջոցառումները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Սույն հաշվետվության 5-րդ կետում արտացոլված թեմաների շուրջ տեղի են ունեցել քննարկումներ ՉԺՀ-ի և այլ երկրներից հրավիրված մաքսային մարմինների տարբեր

ստորաբաժանումների պաշտոնատար անձանց և Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայության ներկայացուցիչների միջև:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

Հանդիպման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել և փաստաթղթեր չեն ստորագրվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Այցելության արդյունքում ՀՀ ՊԵԿ մասնակիցների կողմից բարձր է գնահատվել ՉԺՀ-ի նախաձեռնությամբ միջազգային տարբեր հարթակներում գործընկեր երկրների մասնագիտական կառույցների հետ հանդիպումների, ոլորտային քննարկումների անցկացումը, մասնավորապես՝ մաքսային վարչարարության ոլորտում արդիական և նորարական մեխանիզմների ներդրման համատեքստում:

Միջոցառմանը մասնակցությունը թույլ տվեց ՊԵԿ ներկայացուցիչներին անմիջականորեն տեսնել մաքսային հսկողության շրջանակներում ՉԺՀ-ի մաքսային մարմնի կողմից իրականացվող հսկողական գործառույթների իրականացման ընթացակարգը, հարցեր ուղղել և ստանալ պատասխաններ՝ լիազորությունների իրականացման առանձնահատկությունների, ներդրված մաքսային հսկողական համակարգերի գործածման ընթացակարգերի վերաբերյալ: Այցելության ընթացքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչպես նաև փորձի փոխանակման արդյունքները կօգտագործվեն հետագա աշխատանքների կազմակերպման ժամանակ՝ նպատակ ունենալով բարձրացնել համապատասխան աշխատանքների որակը, թիրախային ստուգումների իրականացմանը, առավել ռիսկային սուբյեկտների թիրախավորմանը, մաքսային-հարկային համագործակցության զարգացմանը, օրինապահության ինստիտուտի ներդրմանը և շարունակական զարգացմանը:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

Հայկազ Քոչարյան _____

Սամվել Ղազարյան _____

30.09. 2025թ.